ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի 08.04.2025թ. N 1/2-Լ որոշման

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԱՎԱՐՏԱԾ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. 2025 թվականի գարնան որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրները կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2025թ. ապրիլի 9-ից մինչև 2025թ. ապրիլի 20-ը (ներառյալ)** ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին): Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 30-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով):
2. Ներկայացված փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգումը ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմակերպում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:
3. Որակավորման քննությունների **առաջին փուլն** անցկացվելու է **ք.Երևան, Զաքյան 7-3** հասցեում (ՀՀ փաստաբանական ակադեմիայի լսարաններում), իսկ **երկրորդ փուլը**՝ ՀՀ փաստաբանների պալատում (**ք.Երևան, Զաքյան 7-2** հասցեում):
4. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քաղաքացիաիրավական և վարչական ուղղվածության ունկնդիրների որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **14.05.2025թ. ժամը 09.00-ից:**
5. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քրեաիրավական ուղղվածության ունկնդիրների որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **15.05.2025թ. ժամը 09.00-ից:**
6. Առաջին փուլի քննությանը մասնակցելու համար հավակնորդները պետք է ներկայանան և գրանցվեն քննության օրը՝ ժամը **08^{00}-ից** մինչև **08^{45}**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
7. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության ունկնդիրների որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **17.06.2025թ-ին ժամը 09.00-ից:**
8. ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած քրեաիրավական ուղղվածության ունկնդիրների որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **18.06.2025թ-ին ժամը 09.00-ից:**
9. Երկրորդ փուլին մասնակցելու համար հավակնորդը պետք է ներկայանա ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից էլեկտրոնային փոստով կամ այլ եղանակով ծանուցված օրը և ժամին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Երկրորդ փուլին կարող է մասնակցել առաջին փուլը հաղթահարած հավակնորդը: